



**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**  
**ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ**

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian, 0025, Yerevan, Republic of Armenia  
(+374 10) 55-25-37, orient@ysu.am, www.yasu.am

**Արձանագրություն № 6**

Արևելագիտության ֆակուլտետի գիտխորհրդի 2016թ մարտի 16-ի նիստի

Նիստին ներկա էին գիտխորհրդի 25 (քսանհինգ) անդամներից 19-ը:

Նիստին մասնակցում էին հրավիրված մասնագետներ պ.գ.դ. Արտակ Մովսիսյանը, պ.գ.դ. Էդիկ Մինասյանը և պ.գ.դ. Արամ Քոսյանը:

Օրակարգում՝

1. Ուսումնական պլաններում փոփոխություն կատարելու հարցը (զեկուցող՝ Մելքոնյան Ռ.)
2. ավարտական քննությունների վերաբերյալ աշխատանքային խմբի առաջարկների քննարկում
3. Հեռակա մագիստրատուրայի ուս պլանի քննարկում (զեկուցող՝ Մելքոնյան Ռ.)
4. Առաջին կիսամյակի սոցիալոգիայի արդյունքների ամփոփում (զեկուցող՝ Մելքոնյան Ռ.)
5. ֆակուլտետի 2016-2020 թթ ռազմավարական ծրագրի ժամանակացույց պլանի քննարկման հարցը
6. Քննական շրջանի արդյունքների ամփոփում
7. Արաբագիտության ամբիոնի դոցենտի պաշտոնի ընտրություններում Ալիս Ժիրայրի Էլոյանի թեկնածության հարցը:
8. Արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի հայցորդ Զարուհի Խաչատրյանի թեկնածուական ատենախոսության թեման վերահաստատելու և գիտական ղեկավարի փոփոխման հարցը:
9. Արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Հովհաննես Մարգարյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատելու և գիտական ղեկավարի նշանակելու հարցը:
10. Արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի ասպիրանտ Գոհար Հակոբյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատելու և գիտական ղեկավարի նշանակելու հարցը:
11. Արևելագիտության ֆակուլտետի արաբագիտության ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Մարիամ Մխիթարյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատելու և գիտական ղեկավարի նշանակելու հարցը:
12. Արևելագիտության ֆակուլտետի արաբագիտության ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Նաիրա Սահակյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատելու և գիտական ղեկավարի նշանակելու հարցը:

13. Արևելագիտության ֆակուլտետի արաբիզատության ամբիոնի պրոֆեսոր, բ.գ.թ. Դավիթ Հովհաննիսյանին Է.00.05 «Պատմագրություն, աղբյուրագիտություն» մասնագիտությամբ դեկավարելու թույլատվություն ստանալու համար ՀՀ ԲՈՀ-ին միջնորդելու հարցը:
14. Արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության ամբիոնի հեռակա ասպիրանտ Անժելա Ավագյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատելու և գիտական դեկավարի նշանակելու հարցը:
15. «02. Գիտական և գիտատեխնիկական գործունեության հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտություններ» ծրագրի շրջանակներում (պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագիր N ՄՆ-05-Պ/15) թյուրքագիտության ամբիոնի դասախոս Ն. Պողոսյանի և Ս. Կարապողոսյանի հեղինակած «Թուրքիայի Հանրապետության և թյուրքական սփյուռքի համագործակցության հակահայկական ուղղվածությունը» գիրքը հրատարակության երաշխավորելու հարցը:
16. Արևելագիտության ֆակուլտետի Իրանագիտության ամբիոնի բակալավրիատի ուսումնական պլանում և փոփոխություններ կատարելու հարցը:
17. Արևելագիտության ֆակուլտետի Իրանագիտության ամբիոնի «Իրանական պատմաբանասիրություն» և «Թալիշագիտություն և քրդագիտություն» մագիստրոսական ծրագրերի առարկայացանկը հաստատելու հարցը:
18. Արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության ամբիոնի բակալավրիատի ուսումնական պլանում փոփոխություններ կատարելու հարցը:

Լ Ս Ե Ց Ի Ն - Ուսումնական պլաններում փոփոխություն կատարելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Արևելագիտության ֆակուլտետի դեկան Գ. Մելիքյանը, դեկանի տեղակալ Ռ. Մելքոնյանը, թյուրքագիտության ամբիոնի վարիչ Ա. Սաֆարյանը, Ս. Կարաբեկյան, գիտխորհրդի քարտուղար Հ. Քոչարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – ընդունել աշխատանքային խմբի առաջարկությունը

1. երեք ամբիոնների բակալավրիատի կրթական ծրագրերից հանել «Տրամաբանություն» առարկան,
2. երեք ամբիոնների բակալավրիատի կրթական ծրագրերում ավելացնել «Մերձավոր Արևելքի պատմություն» առարկան:  
Հանձնարարել աշխատանքային խմբին համապատասխանացնել վերոհիշյալ փոփոխությունը «ԵՊՀ կրթական ծրագրերի հաստատման կարգին» և զեկուցել հաջորդ նիստին:

Լ Ս Ե Ց Ի Ն - Արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության ամբիոնի բակալավրիատի ուսումնական պլանում փոփոխություններ կատարելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Արևելագիտության ֆակուլտետի դեկան Գ. Մելիքյանը, դեկանի տեղակալներ Ռ. Մելքոնյանը, թյուրքագիտության ամբիոնի վարիչ Ա. Սաֆարյանը, Ս. Կարաբեկյան, իրանագիտության ամբիոնի վարիչ Վ. Ոսկանյանը, գիտխորհրդի քարտուղար Հ. Քոչարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Կատարել թյուրքագիտության ամբիոնի բակալավրիատի ուսումնական պլանում հետևյալ փոփոխությունները.

1. բակալավրիատի կրթական ծրագրերից հանել «Տրամաբանություն» առարկան,
2. բակալավրիատի կրթական ծրագրերում ավելացնել «Մերձավոր Արևելքի պատմություն-1» առարկան:
3. Ելնելով մասնագիտական և կիրառական անհրաժեշտությունից «Օսմաներեն» (4 կրեդիտ, 64 ժամ գործնական, 5-րդ կիսամյակ) առարկայից կրճատել 32 գործնական ժամ և 2 կրեդիտ և դրա հաշվին ստեղծել «Մերձավոր Արևելքի պատմություն (Արաբական երկրներ) - 2» (32 ժ դասախոսություն, 2 կրեդիտ, 6-րդ կիսամյակ) առարկան:

Լ Ս Ե Ց Ի Ն - Հեռակա մագիստրատուրայի ուս պլանի քննարկման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Արևելագիտության ֆակուլտետի դեկան Գ. Մելիքյանը, դեկանի տեղակալ Ռ. Մելքոնյանը, թյուրքագիտության ամբիոնի վարիչ Ա. Սաֆարյանը, Ս. Կարաբեկյան, գիտխորհրդի քարտուղար Հ. Քոչարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – ընդունել Հեռակա մագիստրատուրայի ուս պլանը և հանձնարարել աշխատանքային խմբին համապատասխանացնել «ԵՊՀ կրթական ծրագրերի հաստատման կարգին» և հաջորդ նիստին ներկայացնել հեռակա մագիստրատուրայի կրթական ծրագրի նախագիծը:

Լ Ս Ե Ց Ի Ն - ավարտական քննությունների վերաբերյալ աշխատանքային խմբի առաջարկները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Արևելագիտության ֆակուլտետի դեկան Գ. Մելիքյանը, դեկանի տեղակալ Ռ. Մելքոնյանը, թյուրքագիտության ամբիոնի վարիչ Ա. Սաֆարյանը, Ս. Կարաբեկյան, գիտխորհրդի քարտուղար Հ. Քոչարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Քննական տոմսը կազմված է չորս հարցից: Առաջին հարց՝ արևելյան լեզվից անձանոթ տեքստի թարգմանություն հայերեն (6 միավոր): Երկրորդ հարց՝ հայերենից անձանոթի տեքստի թարգմանություն արևելյան լեզվի (4 միավոր): Երրորդ հարց՝ արևելյան լեզվի պատմություն/ ուսումնասիրվող երկրի/ների գրականություն (5 միավոր): Չորրորդ հարց՝ ուսումնասիրվող երկրի պատմություն/իսլամագիտություն (5 միավոր): Երրորդ և չորրորդ խմբի հարցերի համար սահմանել 80 հարցից բաղկացած հարշար: Հանձնարարել ամբիոններին մշակել գնահատման չափորոշիչները:

Լ Ս Ե Ց Ի Ն - Քննական շրջանի արդյունքների ամփոփում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Արևելագիտության ֆակուլտետի դեկան Գ. Մելիքյանը, դեկանի տեղակալ Ռ. Մելքոնյանը, թյուրքագիտության ամբիոնի վարիչ Ա. Սաֆարյանը, Ս. Կարաբեկյան, գիտխորհրդի քարտուղար Հ. Քոչարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն Ռ: Մելքոնյանի հաղորդագրությունը քննական շրջանի արդյունքների վերաբերյալ:

Լ Ս Ե Ց Ի Ն - Առաջին կիսամյակի սոցհարցումների արդյունքների ամփոփում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Արևելագիտության ֆակուլտետի դեկան Գ. Մելիքյանը, դեկանի տեղակալ Ռ. Մելքոնյանը, թյուրքագիտության ամբիոնի վարիչ Ա. Սաֆարյանը, գիտխորհրդի քարտուղար Հ. Քոչարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ - Ի գիտություն ընդունել սոցիալաբանության արդյունքները: հարցաթերթիկներում ուսանողների կողմից բարցրացված հարցերը և խնդիրները: Մասնավորապես՝ օտար լեզուների, փիլիսոփայության հիմունքների դասավանդման որակի, դասախոսների ուշացումների և բացակայությունների և դասընթացի ծրագրից շեղվելու վերաբերյալ բարցրացված հարցերը ուսումնասիրելու համար կազմակերպել ներքին մանիտորինգ՝ ներգրավելով ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների ներկայացուցիչների:

Լ Ս Ե Ց Ի Ն - ֆակուլտետի 2016-2020 թթ ռազմավարական ծրագրի ժամանակացույց պլանի քննարկման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Արևելագիտության ֆակուլտետի դեկան Գ. Մելիքյանը, դեկանի տեղակալ Ռ. Մելքոնյանը, թյուրքագիտության ամբիոնի վարիչ Ա. Սաֆարյանը, Ս. Կարաբեկյան, գիտխորհրդի քարտուղար Հ. Քոչարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ - ընդունել աշխատանքային խմբի կողմից մշակված ֆակուլտետի 2016-2020 թթ ռազմավարական ծրագրի ժամանակացույց պլանը (տես հավելվածում):

Լ Ս Ե Ց Ի Ն - Արաբագիտության ամբիոնի դոցենտի պաշտոնի ընտրություններում Ալիս Ժիրայրի Էլոյանի թեկնածության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - ֆակուլտետի դեկան Գ. Մելիքյանը, և մրցութային հանձնաժողովի քարտուղար Հ. Քոչարյանը, որը ներկայացրեց թեկնածուի անձնական գործը, թյուրքագիտության ամբիոնի վարիչ պրոֆ. Ալ. Սաֆարյանը և իրանագիտության ամբիոնի վարիչ Վ. Ոսկանյանը:

Նիստը նախագահողը առաջարկեց ստեղծել հաշվիչ հանձնաժողով և սկսել քվեարկությունը: Առաջարկվեցին Ղազարյան Լուսյայի, Սողոմոնյան Աշոտի, Պետունց Արենի, Քոչարյան Հայկի և Գևորգյան Գառնիկի թեկնածությունները: Հաշվիչ հանձնաժողովի վերոհիշյալ կազմը հաստատվեց միաձայն: Հաշվիչ հանձնաժողովի նախագահ ընտրվեց Լ. Ղազարյանը:

Անցկացվեց փակ գաղտնի քվեարկություն:

Լսեցին հաշվիչ հանձնաժողովի նախագահ Լ. Ղազարյանը հաղորդումը փակ գաղտնի քվեարկության արդյունքների մասին:

Խորհրդի 25 անդամներից, ներկա էին 19-ը և քվեարկությանը մասնակցել են 19-ը: Բաժանվել է 19 քվեաթերթիկ: Քվեատուփում հայտնաբերվել է 19 քվեաթերթիկ:

Արաբագիտության ամբիոնի դոցենտի պաշտոնի ընտրություններում Ալիս Ժիրայրի Էլոյանի թեկնածությանը քվեարկել են՝

Փակ գաղտնի քվեարկության արդյունքներով Ալիս Ժիրայրի Էլոյանը ընտրվել է արևելագիտության ֆակուլտետի արաբագիտության ամբիոնի դոցենտի պաշտոնում:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաստատել հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը փակ (գաղտնի) քվեարկության արդյունքների վերաբերյալ (միաձայն), որի համաձայն Ալիս Ժիրայրի Էլոյանը ընտրվել է արաբագիտության ամբիոնի դոցենտի պաշտոնում:

Լ Ս Ե Ց Ի Ն - Արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի հայցորդ Ջարուհի Խաչատրյանի թեկնածուական ատենախոսության թեման վերահաստատելու և գիտական ղեկավարի փոփոխման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Արևելագիտության ֆակուլտետի ղեկան Գ. Մելիքյանը, ղեկանի տեղակալ Ռ. Մելքոնյանը, թյուրքագիտության ամբիոնի վարիչ Ա. Սաֆարյանը, Ս. Կարաբեկյան, գիտխորհրդի քարտուղար Հ. Քոչարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ - վերահաստատել իրանագիտության ամբիոնի հայցորդ Ջարուհի Խաչատրյանի «Ուղտի և ձիու անվանումները պարսկերենում» թեկնածուական ատենախոսության թեման (Ժ.02.06 «Ասիայի հին և նոր լեզուներ» մասնագիտությամբ) և գիտական ղեկավար նշանակել Բ.Գ.Թ. դոցենտ Վ. Ոսկանյանին:

Լ Ս Ե Ց Ի Ն - Արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Հովհաննես Սարգսյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատելու և գիտական ղեկավարի նշանակելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Արևելագիտության ֆակուլտետի ղեկան Գ. Մելիքյանը, ղեկանի տեղակալ Ռ. Մելքոնյանը, թյուրքագիտության ամբիոնի վարիչ Ա. Սաֆարյանը, Ս. Կարաբեկյան, գիտխորհրդի քարտուղար Հ. Քոչարյանը, պ.գ.դ. Արտակ Մովսիսյանը, պ.գ.դ. Էդիկ Մինասյանը և պ.գ.դ. Արամ Քոսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ - Հաստատել իրանագիտության ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Հովհաննես Սարգսյանի «Ատրպատականի էթնիկական պատմությունը և էթնոգոյացման գործընթացները» թեկնածուական ատենախոսության թեման և գիտական ղեկավար նշանակել պ.գ.դ. Արամ Քոսյանին:

Լ Ս Ե Ց Ի Ն - Արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի ասպիրանտ Գոհար Հակոբյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատելու և գիտական ղեկավարի նշանակելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Արևելագիտության ֆակուլտետի ղեկան Գ. Մելիքյանը, ղեկանի տեղակալ Ռ. Մելքոնյանը, թյուրքագիտության ամբիոնի վարիչ Ա. Սաֆարյանը, Ս. Կարաբեկյանը, Դ. Հովհաննիսյանը, Թ. Չարչյանը, գիտխորհրդի քարտուղար Հ. Քոչարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – հաստատել (կողմ՝ 10, ձեռնպահ՝ 9) իրանագիտության ամբիոնի ասպիրանտ Գոհար Հակոբյանի «Մերձկասպյան-ատրպատականյան լեզվական միություն» թեկնածուական ատենախոսության թեման (Ժ.02.06 «Ասիայի հին և նոր լեզուներ» մասնագիտությամբ) և գիտական ղեկավար նշանակել բ.գ.դ. պրոֆեսոր Գ. Ասատրյանին:

Լ Ս Ե Ց Ի Ն - Արևելագիտության ֆակուլտետի արաբագիտության ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Մարիամ Մխիթարյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատելու և գիտական ղեկավարի նշանակելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Արևելագիտության ֆակուլտետի ղեկան Գ. Մելիքյանը, ղեկանի տեղակալ Ռ. Մելքոնյանը, թյուրքագիտության ամբիոնի վարիչ Ա. Սաֆարյանը, Ս. Կարաբեկյան, գիտխորհրդի քարտուղար Հ. Քոչարյանը, պ.գ.դ. Արտակ Մովսիսյանը, պ.գ.դ. Էդիկ Մինասյանը և պ.գ.դ. Արամ Քոսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել արաբագիտության ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Մարիամ Մխիթարյանի «Իսլամական պետություն». կրոնա-գաղափարական հիմքեր և քաղաքական իրողություն» թեկնածուական ատենախոսության թեման և գիտական ղեկավար նշանակել բ.գ.թ. պրոֆեսոր Դավիթ Հովհաննիսյանին:

Լ Ս Ե Ց Ի Ն - Արևելագիտության ֆակուլտետի արաբագիտության ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Նաիրա Սահակյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատելու և գիտական ղեկավարի նշանակելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Արևելագիտության ֆակուլտետի ղեկան Գ. Մելիքյանը, ղեկանի տեղակալ Ռ. Մելքոնյանը, թյուրքագիտության ամբիոնի վարիչ Ա. Սաֆարյանը, Ս. Կարաբեկյան, գիտխորհրդի քարտուղար Հ. Քոչարյանը, պ.գ.դ. Արտակ Մովսիսյանը, պ.գ.դ. Էդիկ Մինասյանը և պ.գ.դ. Արամ Քոսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել արաբագիտության ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Նաիրա Սահակյանի «Ալ-Ջահիզի ստեղծագործությունները (Rasā'il li Kitāb al-Bayān wa't-tabyīn)՝ որպես միջնադարյան արաբամուսուլմանական կրոնագաղափարական մտքի ուսումնասիրման աղբյուր» թեկնածուական ատենախոսության թեման և գիտական ղեկավար նշանակել բ.գ.թ. պրոֆեսոր Դավիթ Հովհաննիսյանին:

Լ Ս Ե Ց Ի Ն - Արևելագիտության ֆակուլտետի արաբագիտության ամբիոնի պրոֆեսոր, բ.գ.թ. Դավիթ Հովհաննիսյանին Է.00.05 «Պատմագրություն, աղբյուրագիտություն» մասնագիտությամբ ղեկավարելու թույլատվություն ստանալու համար ՀՀ ԲՈՀ-ին միջնորդելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Արևելագիտության ֆակուլտետի ղեկան Գ. Մելիքյանը, ղեկանի տեղակալ Ռ. Մելքոնյանը, թյուրքագիտության ամբիոնի վարիչ Ա. Սաֆարյանը, իրանագիտության ամբիոնի վարիչի

պաշտոնակատար Վ. Ոսկանյանը, գիտխորհրդի քարտուղար Հ. Քոչարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Միջնորդել ՀՀ ԲՈՀ-ին թույլատրել արևելագիտության ֆակուլտետի արաբիզատության ամբիոնի պրոֆեսոր, բ.գ.թ. Դավիթ Հովհաննիսյանին ղեկավարել թեկնածուական ատենախոսություն Է.00.05 «Պատմագրություն, աղբյուրագիտություն» մասնագիտությամբ:

Լ Ս Ե Ց Ի Ն - Արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության ամբիոնի հեռակա ասպիրանտ Անժելա Ավագյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատելու և գիտական ղեկավարի նշանակելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Արևելագիտության ֆակուլտետի ղեկան Գ. Մելիքյանը, ղեկանի տեղակալ Ռ. Մելքոնյանը, թյուրքագիտության ամբիոնի վարիչ Ա. Սաֆարյանը, Ս. Կարաբեկյան, գիտխորհրդի քարտուղար Հ. Քոչարյանը, պ.գ.դ. Արտակ Մովսիսյանը, պ.գ.դ. Էդիկ Մինասյանը և պ.գ.դ. Արամ Քոսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել թյուրքագիտության ամբիոնի հեռակա ասպիրանտ Անժելա Ավագյանի «Թուրքիայի հասարակական-քաղաքական ղեպքերի արտացոլումը Հալիդե Էդիպ Ադվարի ստեղծագործություններում» թեկնածուական ատենախոսության թեման և գիտական ղեկավար նշանակել բ.գ.թ., դոցենտ Ռ. Մելքոնյանին:

Լ Ս Ե Ց Ի Ն - «02. Գիտական և գիտատեխնիկական գործունեության հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտություններ» ծրագրի շրջանակներում (պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագիր N ՄՆ-05-Պ/15) թյուրքագիտության ամբիոնի դասախոս Ն. Պողոսյանի և Ս. Կարապողոսյանի հեղինակած «Թուրքիայի Հանրապետության և թուրքական սփյուռքի համագործակցության հակահայկական ուղղվածությունը» գիրքը հրատարակության երաշխավորելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Արևելագիտության ֆակուլտետի ղեկան Գ. Մելիքյանը, ղեկանի տեղակալ Ռ. Մելքոնյանը, թյուրքագիտության ամբիոնի վարիչ Ա. Սաֆարյանը, Դ. Հովհաննիսյանը, Թ. Չարյանը, գիտխորհրդի քարտուղար Հ. Քոչարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Երաշխավորել հրատարակության թյուրքագիտության ամբիոնի դասախոս Ն. Պողոսյանի և Ս. Կարապողոսյանի հեղինակած «Թուրքիայի Հանրապետության և թուրքական սփյուռքի համագործակցության հակահայկական ուղղվածությունը» գիրքը:

Լ Ս Ե Ց Ի Ն - Արևելագիտության ֆակուլտետի Իրանագիտության ամբիոնի «Իրանական պատմաբանասիրություն» և «Թալիշագիտություն և քրդագիտություն» մագիստրոսական ծրագրերի առարկայացանկը հաստատելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Արևելագիտության ֆակուլտետի դեկան Գ. Մելիքյանը, դեկանի տեղակալներ Ռ. Մելքոնյանը, թյուրքագիտության ամբիոնի վարիչ Ա. Սաֆարյանը, Ս. Կարաբեկյան, իրանագիտության ամբիոնի վարիչ Վ. Ոսկանյանը, գիտխորհրդի քարտուղար Հ. Քոչարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – հաստատել «Իրանական պատմաբանասիրություն» և «Թալիշագիտություն և քրդագիտություն» մագիստրոսական ծրագրերի հետևյալ առարկայացանկերը.

***Թալիշագիտություն և քրդագիտություն***

***Ընդհանուր և մասնագիտական դասընթացներ***

1. Մասնագիտության արդիական հիմնախնդիրներ
2. Նախախալամական Իրանի կրոնների պատմություն

***Պարտադիր դասընթացներ***

1. Քրդերեն -1
2. Թալիշերեն -1
3. Քրդերի պատմության հիմնահարցեր - 1
4. Թալիշ ժողովրդի պատմություն -1
5. Թալիշական քաղաքական շարժումը
6. Քրդական քաղաքական շարժումը
7. Քրդերեն -2
8. Թալիշերեն -2
9. Քրդերի պատմության հիմնահարցեր - 2
10. Թալիշ ժողովրդի պատմություն - 2
11. Քրդերենի բարբառագիտությունը
12. Քրդերեն -3
13. Թալիշերեն -3
14. Ժամանակակից քրդական մամուլի լեզուն (կուրմանջի)
15. Թալիշերեն քաղաքական տեքստերի ընթերցում

***Կամրնտրական առարկաներ***

1. Քրդերի կրոնը/Թալիշական ժողովրդական հավատալիքները
2. Իրաքյան Քրդստանի քաղաքական համակարգը/Թալիշական պետական միավորների պատմություն
3. Քրդական սփյուռքի պատմություն/Թալիշական սփյուռքի պատմություն
4. Քուրդ-հայկական փոխառնչակցություններ (պատմություն, մշակույթ, լեզու)/Թալիշ-ատրպատականյան փոխառնչակցություններ
5. Քրդերի ծագումնաբանություն /Թալիշների ծագումնաբանություն
6. Քրդերի ազգագրություն/Թալիշների ազգագրություն

***Իրանական պատմաբանասիրություն***

***Ընդհանուր և մասնագիտական դասընթացներ***

1. Մասնագիտության արդիական հիմնախնդիրներ
2. Նախախալամական Իրանի կրոնների պատմություն

***Պարտադիր դասընթացներ***

1. Հին պարսկերեն
2. Պարսկերենի տեսական քերականության խնդիրներ
3. Հնդկաստանի պարսկալեզու գրականություն
4. Պարսից արդի գրական լեզվի առանձնահատկությունները
5. Թալիշերեն-1
6. Իրանի պատմության հիմնահարցեր
7. Դասական պարսկերեն բնագրերի ընթերցում
8. Իրանի՝ Կովկասի և ԱՊՀ քաղաքականությունը
9. Միջին պարսկերեն և պարթևերեն տեքստերի ընթերցում
10. Թալիշերեն -2



11. Իրանալեզու տարածքների պատմական աշխարհագրություն
12. Իրանական բարբառագիտություն
13. Պարսից գրականության հիմնահարցեր
14. Իրանի հասարակական-քաղաքական մտքի պատմություն
15. Իրանալեզու երկրների քաղաքական պատմության հիմնահարցեր

**Կամրնտրական առարկաներ**

1. Ադրբեջաներեն/Խոսակցական պարսկերեն
2. Մերձավոր Արևելքի ծայրահեղ շիական հոսանքները/Եզդիականության հիմունքներ
3. Պարսից մամուլի լեզուն/Հայ-իրանական լեզվական փոխառնչակցություններ
4. Իրանի մերձավորարևելային քաղաքականության հիմնախնդիրներ/ԻԻՀ պետական կարգը և կառավարման համակարգը
5. Միջնադարյան ազարի /Այսրկովկասի իրանական լեզուներ (Ընդհանուր ներածություն)
6. Կովկասյան պարսկերեն (թաթերեն)/Ատրպատականի ժամանակակից բարբառները

**Լ Ս Ե Ց Ի Ն** - Արևելագիտության ֆակուլտետի Իրանագիտության ամբիոնի բակալավրիատի ուսումնական պլանում և փոփոխություններ կատարելու հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - Արևելագիտության ֆակուլտետի դեկան Գ. Մելիքյանը, դեկանի տեղակալներ Ռ. Մելքոնյանը, թյուրքագիտության ամբիոնի վարիչ Ա. Սաֆարյանը, Ս. Կարաբեկյան, իրանագիտության ամբիոնի վարիչ Վ. Ոսկանյանը, գիտխորհրդի քարտուղար Հ. Քոչարյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ** – Կատարել Իրանագիտության ամբիոնի բակալավրիատի ուսումնական պլանում հետևյալ փոփոխությունները.

1. 2015-2019թթ. ուս.-պլանով 2-րդ կիսամյակում նախատեսված «Երկրագիտություն (Իրան և իրանալեզու տարածքներ)-2» առարկան փոխարինել «Ուսումնասիրվող երկրի պատմություն-1 (Իրան) առարկայով (32 ժամ, 22 դաս., 10 սեմինար, 2 կրեդիտ): Հետևաբար, կրեդիտներ թիվը պահպանելու համար, որն է՝ կիսամյակում 30 կրեդիտ, 2-րդ կիսամյակում նախատեսված «Լեզվաբանության հիմունքներ» առարկայի կրեդիտը 3 կրեդիտի փոխարեն դարձնել 2, «Գրականագիտության ներածություն»-ը 3 կրեդիտից՝ 2, փոխարենը «Մասնագիտական արևելյան լեզու-2 (պարսկերեն)» առարկայի կրեդիտը 8 - ի փոխարեն դարձնել 10:
2. Մասնագիտական առարկաների հաջորդականությունը կիսամյակների միջև պահպանելու համար 2015-2019թթ. ուս.-պլանով 3-րդ կիսամյակում նախատեսված «Գրաբար/Հին հունարեն» կամրնտրական առարկաները (32 ժամ գործնական, 2 կրեդիտ) տեղափոխել 4-րդ կիսամյակ: Այն փոխարինել «Ուսումնասիրվող երկրի պատմություն-2 (Իրան) առարկայով (32 ժամ, 24 դաս., 8 սեմինար, 3 կրեդիտ):
3. 2015-2019թթ. ուս.-պլանով 4-րդ կիսամյակում «Ուսումնասիրվող երկրի պատմություն-3 (Իրան) առարկայի 96 ժամը դարձնել 64 ժամ (56 դաս., 8 սեմինար, 4 կրեդիտ)՝ ի հաշիվ 2-րդ և 3-րդ կիսամյակներում ավելացվող նույն առարկայի ժամաքանակի: 4-րդ կիսամյակում «Տրամաբանություն» և «Հայաստանը և հին իրանական պետությունները (հին շրջանում)» առարկաները փոխարինել «Մերձավոր Արևելքի երկրների պատմություն (Արաբական երկրներ և Թուրքիա)» առարկայով (32 դաս., 32 սեմինար, 4

կրեդիտ): «Իրանական ազգաբանության հիմունքներ» առարկայի 3 կրեդիտը կրեդիտների կիսամյակային թիվը պահելու համար դարձնել 2, իսկ «Ուսումնասիրվող երկրի գրականության պատմություն-3 (իրանական գրականություն)» առարկայի 5 կրեդիտը դարձնել 4:

4. 2015-2019թթ. ուս.-պլանով 8-րդ կիսամյակում նախատեսված «Հնդիրանագիտության հիմունքներ/Քրդագիտության ներածություն» կամընտրական առարկաների զույգը հանել: Դրա փոխարեն ավելացնել «Մասնագիտական արևելյան լեզու 8 (պարսկերեն)» առարկայի ժամաքանակն ու կրեդիտը (6 կրեդիտից՝ 8 կրեդիտ, 80 ժամից՝ 96 ժամ): «Քրդագիտության ներածություն» առարկան ավելացնել 5-րդ կիսամյակում նախատեսված «Արևելյան կրոնների պատմության և տեսության ներածություն/Իրանական լեզուների և բարբառների պատմություն» (32 ժամ դաս., 2 կրեդիտ) կամընտրական զույգին:

ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Գ. ՄԵԼԻՔՅԱՆ

ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ. ՔՈՉԱՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝

ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Հ. ՔՈՉԱՐՅԱՆ

*Հաստատված է*

ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի  
2016 թ. մարտի 16-ի նիստում ընդունված N 6 որոշմամբ  
Արևելագիտության ֆակուլտետի ԳԽ նախագահ՝  
Գ. Մելիքյան -----

**ԵՊՀ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ  
ՖԱԿՈՒԼՏԵՏԻ 2016-2020 ԹԹ.  
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ  
ԾՐԱԳԻՐ (ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ  
ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ-ՊԼԱՆ)**

Երևան-2016



տարածման ներհամալսարանական մեխանիզմները, նպաստել ուսուցման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների ներդրմանը:										
<b>2.</b> Կրթափորձի կարգով ներդնել արդյունահենք և ձևավորող (ֆորմատիվ) գնահատման նոր ձևեր՝ հիմնված ակնկալվող կրթական վերջնարդյունքների գնահատման վրա: Ստեղծել համապատասխան մեթոդական հենք և ձեռնարկներ:								X	X	X
<b>3.</b> Ուսումնասիրել դասավանդման, ուսումնառության և հետազոտության ինտեգրման (փոխկապակցման) ժամանակակից փորձը՝ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում կիրառելու նպատակով:	X	X	X	X	X	X	X	X	X	X
<b>4.</b> Մշակել և ներդնել ակադեմիական ազնվությունն ապահովող մեխանիզմներ, այդ թվում՝ ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի (ատենախոսությունների) գրագողությունը կանխելու նպատակով:	X	X	X	X	X	X				
<i>Խնդիր 1.3. Բարձրացնել որակի ներքին ապահովման համակարգի կառույցների գործունեության արդյունավետությունը:</i>										
<b>1.</b> Փորձական սկզբունքով ստեղծել մի շարք կրթական ծրագրերի ուսանողական հանձնաժողովներ՝ ուսանողական հարցումների արդյունքներին հետամուտ լինելու և ծրագրերի որակի վերաբերյալ հետադարձ կապն ապահովելու համար: Հաջողված փորձը տարածել բոլոր ծրագրերում:	X	X								
<b>2.</b> Գործադրել կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման (մոնիթորինգի) և պարբերական վերանայման կարգը մագիստրոսի ծրագրերի համար:								X	X	X
<b>3.</b> Գործադրել ԵՊՀ դասախոսական կազմի գործունեության բազմագործոն գնահատման կարգը բոլոր ամբիոններում և կենտրոններում:			X	X	X	X	X			
<b>4.</b> Ֆակուլտետում ստեղծել ծրագրերի մշակման, մշտադիտարկման և վերանայման խմբեր՝ ներքին (ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմ, ուսանողներ, վարչակազմ) և			X	X	X	X	X	X	X	X

արտաքին (գործատուներ, ակադեմիական գործընկերներ) շահակիցների ներգրավմամբ:										
<i>Խնդիր 1.4. Ապահովել տեղեկատվական տեխնոլոգիաների ընդլայնված և արդյունավետ օգտագործումը կրթական գործընթացում:</i>										
1. Ներդնել և շահագործել վերուսուցման ունիվերսալ էլեկտրոնային համակարգ՝ ուսումնառության ռեսուրսների առցանց մատուցման համար:	X	X	X	X	X	X	X	X	X	X
2. Վերապատրաստել դասախոսական կազմը ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների ստեղծման և մատուցման համար:			X	X	X	X	X	X	X	X
3. Ապահովել կրթական ծրագրերը ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսներով:						X	X	X	X	X
4. Հեռակա ուսուցման դասընթացներն ապահովել համապատասխան էլեկտրոնային ռեսուրսներով:	X	X	X	X	X	X	X	X	X	X
5. Մշակել և ներդնել առցանց եղանակով իրականացվող դասընթացները:	X	X	X	X	X	X	X	X	X	X
6. Դասավանդման պրոցեսում ներդնել առցանց դասավանդման և գնահատման գործիքներ՝ նախատեսելով դասախոսների համապատասխան ուսուցում՝ այդ թվում շարժական սարքերով ուսուցման գործիքներ (mobile teaching)		X	X	X	X	X	X	X	X	X
<i>Խնդիր 1.5. Ստեղծել լեզուների ուսուցման և թեստավորման կենտրոն:</i>										
1. Մշակել Կենտրոնի ծրագրային մեթոդական հենքը՝ լեզուների բազմամակարդակ ուսուցման համար:		X	X							
2. Լեզվի կենտրոնի միջոցով կազմակերպել արևելյան լեզուների դասընթացներ ինչպես ՀՀ քաղաքացիների, այնպես էլ օտարերկրյա քաղաքացիների համար:				X	X	X	X	X	X	X













սելով նրանց կողմից Համալսարանին և ֆակուլտետին ֆինանսական, նյութական և այլ բնույթի աջակցության նախաձեռնությունները:										
<b>3.</b> Ուսումնասիրել Համալսարանի բիզնես հնարավորությունները, մշակել ու կենսագործել տարաբնույթ բիզնես ծրագրեր:	<b>X</b>	<b>X</b>	<b>X</b>	<b>X</b>	<b>X</b>	<b>X</b>	<b>X</b>	<b>X</b>	<b>X</b>	<b>X</b>
<b>4.</b> Կազմակերպել տարբեր թիրախային խմբերի համար վճարովի դասընթացներ և այլ ծառայություններ (պաշտոնական թարգմանություններ արևելյան լեզուներից և հակառակը):			<b>X</b>	<b>X</b>	<b>X</b>	<b>X</b>	<b>X</b>	<b>X</b>	<b>X</b>	<b>X</b>
<b>5.</b> Իրականացնել լրացուցիչ կրթության ծրագրերը թիրախային խմբերի համար վճարովի հիմունքներով համագործակցելով ԵՊՀ հետբուհական լրացուցիչ կրթության վարչություն հետ:			<b>X</b>	<b>X</b>	<b>X</b>	<b>X</b>	<b>X</b>	<b>X</b>	<b>X</b>	<b>X</b>
<b><i>Խնդիր 8.3. Կատարելագործել Համալսարանի իրավական դաշտը և կառավարման համակարգը:</i></b>										
<b>1.</b> Ներքին իրավական ակտերը համապատասխանեցնել Համալսարանի նոր կանոնադրությանը:	<b>X</b>	<b>X</b>	<b>X</b>	<b>X</b>						
<b>2.</b> Ներդնել ֆակուլտետի ներքին աուդիտի համակարգ:	<b>X</b>	<b>X</b>	<b>X</b>	<b>X</b>	<b>X</b>	<b>X</b>	<b>X</b>	<b>X</b>	<b>X</b>	<b>X</b>
<b><i>Խնդիր 8.4. Ապահովել համալսարանական գործընթացների թափանցիկությունը նվազեցնելով կոռուպցիոն ռիսկերը:</i></b>										
<b>1.</b> Մեծացնել ուսանողների գիտելիքների գնահատման գործընթացի թափանցիկությունը, բարձրացնել կիրառվող գնահատման համակարգի, չափանիշների և ընթացակարգերի վերաբերյալ ուսանողների իրազեկվածության մակարդակը:	<b>X</b>	<b>X</b>	<b>X</b>	<b>X</b>	<b>X</b>	<b>X</b>	<b>X</b>	<b>X</b>	<b>X</b>	<b>X</b>
<b>2.</b> Կազմակերպել հակակոռուպցիոն տեխնոլոգիաների և դրանց կիրառման հմտությունների վերաբերյալ ուսումնական մոդուլներ:	<b>X</b>	<b>X</b>	<b>X</b>	<b>X</b>	<b>X</b>	<b>X</b>				

**IX. ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ ԵՎ ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ**

Գործողություն/ միջոցառում/ ծրագիր	2016		2017		2018		2019		2020	
	I Կիս. (01- 06)	II Կիս. (07- 12)	I Կիս. (01- 06)	II Կիս. (07- 12)	I Կիս. (01- 06)	II Կիս. (07- 12)	I Կիս. (01- 06)	II Կիս. (07- 12)	I Կիս. (01- 06)	II Կիս. (07- 12)
<b>Խնդիր 9.1. Չարգացնել Համալսարանի միջազգայնացմանը նպաստող քաղաքականությունը:</b>										
1. Հստակեցնել միջազգայնացման դերակատարների գործառույթները կառուցվածքային տարբեր մակարդակներում, սահմանել և կիրարկել նրանց խրախուսման մեխանիզմները:	X	X	X	X	X	X	X	X	X	X
2. Ստեղծել հրավիրյալ պրոֆեսորի ինստիտուտ:	X	X	X	X	X	X	X	X	X	X
3. Ընդլայնել նոր կապերը տարածաշրջանային և համաշխարհային առաջատար արևելագիտական կենտրոնների հետ, համագործակցել ուսումնասիրվող երկրների դեսպանատների հետ:		X	X	X	X	X	X	X	X	X
4. Ստեղծել և հրատարակել օտար լեզով արևելագիտական գիտական հանդես/ներ:		X	X	X						
5. Կազմակերպել միջազգային գիտաժողովներ:			X			X			X	
<b>Խնդիր 9.2. Չարգացնել միջազգայնացման գործընթացները կրթական ոլորտում:</b>										
1. Չարգացնել օտարերկրյա բուհերի հետ համագործակցությունը կրկնակի դիպլոմով համատեղ մագիստրոսական ծրագրերի իրականացման ուղղությամբ:		X	X	X	X	X	X	X	X	X
2. Ներդնել թիրախային օտարալեզու կրթական ծրագրեր և մոդուլներ ցուցաբերելով համապատասխան մեթոդական և նյութական օժանդակություն ծրագրում ներգրաված դասախոսներին					X	X	X	X	X	X